ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

20 մարտի 2018 թվականի **թիվ 41** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության հայտարարագրերը գրանցելու, դրանց գործողությունը կասեցնելու, վերսկսելու ու դադարեցնելու կարգի մասին

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (այսուհետ՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգեր) դրույթների իրականացման նպատակով եւ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 18-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կցվող՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության հայտարարագրերը գրանցելու, դրանց գործողությունը կասեցնելու, վերսկսելու ու դադարեցնելու կարգը:

2. Սահմանել, որ նախքան սույն որոշումն ուժի մեջ մտնելը գրանցված՝ Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության հայտարարագրերը վավերական են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը:

3. Ուժը կորցրած ճանաչել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի ապրիլի 9-ի «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության հայտարարագրերի գրանցման վերաբերյալ հիմնադրույթը հաստատելու մասին» թիվ 76 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 1-ից:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2018 թվականի մարտի 20-ի
թիվ 41 որոշմամբ

ԿԱՐԳ

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության հայտարարագրերը գրանցելու, դրանց գործողությունը կասեցնելու, վերսկսելու ու դադարեցնելու

1. Սույն կարգով սահմանվում են Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգեր) պահանջներին արտադրանքի համապատասխանության հայտարարագրերը գրանցելու, դրանց գործողությունը կասեցնելու, վերսկսելու ու դադարեցնելու կանոնները (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, տեխնիկական կանոնակարգեր, համապատասխանության հայտարարագրեր):

2. Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հայտարարագրի միասնական ձեւի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 293 որոշմամբ հաստատված՝ ձեւակերպման կանոնների համաձայն կազմված համապատասխանության հայտարարագիրը ենթակա է գրանցման տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրում (այսուհետ՝ միասնական ռեեստր):

Համապատասխանության հայտարարագիրը համարվում է գրանցված՝ դրան գրանցման համար շնորհելու պահից:

3. Համապատասխանության հայտարարագրի գրանցումն իրականացվում է Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ)՝ համապատասխանության հայտարարագրերը գրանցելու համար լիազորված մարմինների (կազմակերպությունների), այդ թվում՝ անդամ պետությունների՝ սերտիֆիկացման գծով այն հավատարմագրված մարմինների կողմից, որոնք ներառված են Միության համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրում, եւ որոնց հավատարմագրման շրջանակը տարածվում է հայտարարագրվող արտադրանքի վրա, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ (այսուհետ համապատասխանաբար՝ լիազորված մարմիններ, սերտիֆիկացման մարմիններ):

4. Համապատասխանության հայտարարագիրը գրանցելու համար հայտատուն համապատասխանության հայտարարագիրն ու սույն կարգի 5-րդ կետով նախատեսված՝ դրան կցվող փաստաթղթերն ու տեղեկությունները լիազորված մարմին (սերտիֆիկացման մարմին) է ներկայացնում էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով՝ օգտագործելով «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցը, կամ թղթային կրիչով փաստաթղթերի տեսքով՝ պատվիրված փոստային առաքանիով՝ ներդրվածքի մասին վերգրությամբ եւ հանձնման մասին ծանուցմամբ, եթե այլ բան նախատեսված չէ անդամ պետության օրենսդրությամբ:

5. Համապատասխանության հայտարարագրին կցվում են հետեւյալ փաստաթղթերն ու տեղեկությունները՝

ա) համապատասխանության հայտարարագիրը գրանցելու վերաբերյալ հայտը, որը ձեւակերպված է անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ստորագրված է հայտատուի կողմից եւ պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝

իրավաբանական անձի համար՝ հայտատուի լրիվ անվանումը, դրա գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն) եւ գործունեության իրականացման վայրի հասցեն (հասցեները) (եթե հասցեները տարբերվում են), կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար՝ ազգանունը, անունը եւ հայրանունը (առկայության դեպքում), բնակության վայրը եւ գործունեության իրականացման վայրի հասցեն (հասցեները) (եթե հասցեները տարբերվում են), ինչպես նաեւ հայտատուի գրանցման կամ հաշվառման (անհատական, նույնականացման) համարը, որը, անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, տրվում է իրավաբանական անձի կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի պետական գրանցման ժամանակ, հեռախոսահամարը եւ էլեկտրոնային փոստի հասցեն,

իրավաբանական անձի եւ արտադրանքը պատրաստող դրա մասնաճյուղերի համար՝ արտադրանքը պատրաստողի լրիվ անվանումը, դրա գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն) եւ արտադրանքի պատրաստման գործունեություն իրականացնելու վայրի հասցեն (հասցեները) (եթե հասցեները տարբերվում են), կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար՝ ազգանունը, անունը եւ հայրանունը (առկայության դեպքում), բնակության վայրը եւ արտադրանքի պատրաստման գործունեություն իրականացնելու վայրի հասցեն (հասցեները) (եթե հասցեները տարբերվում են),

արտադրանքի անվանումը եւ նշագիրը (տեխնիկական կանոնակարգով նախատեսված դեպքերում) եւ (կամ) պատրաստողի կողմից արտադրանքին տրված այլ պայմանական նշագիր (առկայության դեպքում),

արտադրանքի անվանումը (տեխնիկական կանոնակարգով նախատեսված դեպքերում) (առկայության դեպքում),

արտադրանքի մասին այնպիսի տեղեկություններ, որոնցով ապահովվում է դրա նույնականացումը (առկայության դեպքում).

այն փաստաթղթի (փաստաթղթերի) նշագիրն ու անվանումը, որին համապատասխան պատրաստված է արտադրանքը (ստանդարտը, կազմակերպության ստանդարտը, տեխնիկական պայմանները կամ մեկ այլ փաստաթուղթ) (առկայության դեպքում),

արտադրանքի ծածկագիրը (ծածկագրերը)՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան (այսուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ),

հայտարարագրման օբյեկտի անվանումը (սերիական թողարկում, խմբաքանակ կամ եզակի արտադրատեսակ): Սերիական թողարկման արտադրանքի համար կատարվում է «սերիական թողարկում» գրառումը: Արտադրանքի խմբաքանակի համար նշվում է խմբաքանակի չափը, եզակի արտադրատեսակի համար՝ արտադրատեսակի գործարանային համարը: Արտադրանքի խմբաքանակի եւ եզակի արտադրատեսակի համար նշվում են արտադրանքի խմբաքանակը (այդ թվում՝ դրա չափը) կամ եզակի արտադրատեսակը նույնականացնող ապրանքաուղեկից փաստաթղթերի վավերապայմանները.

այն տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) անվանումը, որի պահանջներին համապատասխանում է արտադրանքը.

բ) այն տեղեկությունները, որոնցով հաստատվում է իրավաբանական անձի կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի պետական գրանցումը՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

գ) պատրաստողի (այդ թվում՝ օտարերկրյա պատրաստողի) հետ այն պայմանագրի՝ կնիքով (եթե այլ բան սահմանված չէ անդամ պետության օրենսդրությամբ) ու հայտատուի ստորագրությամբ հաստատված պատճենը, որով նախատեսվում է տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին Միության մաքսային տարածք

մատակարարվող արտադրանքի համապատասխանության ապահովումը եւ նշված պահանջներին այդ արտադրանքի անհամապատասխանության համար պատասխանատվությունը (պատրաստողի կողմից լիազորված անձի համար).

դ) այն ապացուցողական նյութերի՝ կնիքով (եթե այլ բան սահմանված չէ անդամ պետության օրենսդրությամբ) ու հայտատուի ստորագրությամբ հաստատված պատճենները, որոնք համապատասխանության հայտարարագրի գրանցման համար ներկայացնելը նախատեսված է տեխնիկական կանոնակարգով (տեխնիկական կանոնակարգերով), այդ թվում՝ արտադրանքի հետազոտությունների (փորձարկումների) ու չափումների արդյունքները, որոնցով հաստատվում է այն տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջների պահպանումը, որի գործողությունը տարածվում է այդ արտադրանքի վրա (եթե տեխնիկական կանոնակարգով նախատեսված է հայտարարագրվող արտադրանքի հետազոտությունների (փորձարկումների) ու չափումների անցկացումը):

6. Եթե գրանցման համար համապատասխանության հայտարարագիրը ներկայացվում է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով, ապա համապատասխանության հայտարարագիրը եւ սույն կարգի 5-րդ կետի «ա» ենթակետում նշված հայտը ստորագրվում են անդամ պետության օրենսդրությանը համապատասխան հայտատուի կողմից ստացված էլեկտրոնային թվային ստորագրության (էլեկտրոնային ստորագրության) (այսուհետ՝ էլեկտրոնային թվային ստորագրություն) կիրառմամբ, իսկ սույն կարգի 5-րդ կետի «բ»-«դ» ենթակետերում նշված փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային եղանակով:

7. Լիազորված մարմինը (սերտիֆիկացման մարմինը) հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերն ու տեղեկություններն ուսումնասիրում է հետեւյալի առնչությամբ՝

ա) համապատասխանության հայտարարագրի ձեւակերպմանը ներկայացվող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 293 որոշմամբ սահմանված պահանջների պահպանումը.

բ) սույն կարգի 5-րդ կետով նախատեսված բոլոր փաստաթղթերի ու տեղեկությունների ներկայացնումը.

գ) տեխնիկական կանոնակարգում այն պահանջի առկայությունը, որով սահմանվում է, որ որոշակի տեսակի արտադրանքի համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգի պահանջներին հաստատվում է համապատասխանության հայտարարագրի ընդունման ձեւով.

դ) համապատասխանության հայտարարագրման որոշակի օբյեկտի համար հայտատուների շրջանակը սահմանող՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հայտարարագիրն ընդունած հայտատուի համապատասխանությունը (սերիական թողարկում, խմբաքանակ կամ եզակի արտադրատեսակ):

8. Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերն ու տեղեկությունները սույն կարգի 7-րդ կետին համապատասխան ուսումնասիրելու արդյունքներով լիազորված մարմինը (սերտիֆիկացման մարմինը) համապատասխանության հայտարարագիրն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում համապատասխանության հայտարարագրի գրանցումն իրականացնում է դրան գրանցման համար շնորհելու միջոցով կամ հայտատուին տեղեկացնում է դրա գրանցումը մերժելու մասին (նշելով մերժման պատճառները):

9. Համապատասխանության հայտարարագիրն անդամ պետության՝ համապատասխանության հայտարարագրերի ավտոմատացված էլեկտրոնային գրանցման մասնագիտացված սերվիսի օգտագործմամբ գրանցելու դեպքում լիազորված մարմինը կառուցվածքային եւ ձեւաչափատրամաբանական

վերահսկողության միջոցով իրականացնում է ստուգում՝ հայտատուի կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 293 որոշմամբ սահմանված՝ համապատասխանության հայտարարագրի ձեւակերպմանը ներկայացվող պահանջների եւ սույն կարգի 5-րդ կետով նախատեսված՝ փաստաթղթերի ու տեղեկությունների տրամադրմանը ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

10. Միասնական ռեեստրի ազգային մասում մուտքագրվում են համապատասխանության հայտարարագրի վերաբերյալ տեղեկությունները՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատված կարգով, ինչպես նաեւ սույն կարգի 5-րդ կետի «գ» եւ «դ» ենթակետերում նշված փաստաթղթերի մասին տեղեկությունները:

11. Համապատասխանության հայտարարագրի գրանցումը մերժելու վերաբերյալ ծանուցումն ուղարկվում է հայտատուին էլեկտրոնային տեսքով՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցի օգտագործմամբ, կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով՝ պատվիրված փոստային առաքանիով՝ հանձնման մասին ծանուցմամբ, կամ հանձնվում է հայտատուին:

12. Համապատասխանության հայտարարագրի մերժման համար հիմք են՝

ա) համապատասխանության հայտարարագրի ձեւակերպմանը ներկայացվող այն պահանջները հայտատուի կողմից չպահպանելը, որոնք սահմանված են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 293 որոշմամբ.

բ) սույն կարգի 5-րդ կետով նախատեսված փաստաթղթերը եւ տեղեկությունները ոչ ամբողջական ծավալով ներկայացնելը.

գ) տեխնիկական կանոնակարգում այն պահանջի բացակայությունը, որով սահմանվում է, որ արտադրանքի որոշակի տեսակի համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգի պահանջներին հաստատվում է համապատասխանության հայտարարագրի ընդունման ձեւով.

դ) համապատասխանության հայտարարագիրն ընդունած հայտատուի անհամապատասխանությունը տեխնիկական կանոնակարգի այն պահանջներին, որոնցով սահմանվում է համապատասխանության հայտարարագրման որոշակի օբյեկտի համար հայտատուների շրջանակը (սերիական թողարկում, խմբաքանակ կամ եզակի արտադրատեսակ).

ե) էլեկտրոնային ստորագրության բացակայությունը համապատասխանության հայտարարագրի եւ համապատասխանության հայտարարագրի գրանցման մասին հայտի մեջ, որոնք ներկայացվել են հայտատուի կողմից էլեկտրոնային փաստաթղթի տեսքով:

13. Համապատասխանության հայտարարագրի գրանցման վճարման անհրաժեշտությունը եւ այդպիսի վճարման կարգը դրա սահմանման դեպքում որոշվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

14. Գրանցված համապատասխանության հայտարարագրում չի թույլատրվում կատարել փոփոխություններ: Փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում հայտատուն ընդունում է համապատասխանության նոր հայտարարագիր եւ իրականացնում է դրա գրանցումը՝ համաձայն սույն կարգի:

15. Հայտատուն ընդունում է նոր համապատասխանության հայտարարագիր եւ իրականացնում է դրա գրանցումը՝ առանց սույն կարգի 5-րդ կետի «բ»-«դ» ենթակետերով նախատեսված փաստաթղթերը եւ տեղեկությունները ներկայացնելու՝ հետեւյալ դեպքերում՝

համապատասխանության հայտարարագրում եւ դրա հավելվածներում սխալների (վրիպակների) հայտնաբերում.

հայտատուի կազմակերպաիրավական ձեւի, գտնվելու վայրի (իրավաբանական անձի հասցեի), գործունեությունն իրականացնելու վայրի հասցեի (հասցեները տարբեր լինելու դեպքում), հեռախոսահամարի եւ (կամ) էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխություն.

արտադրանքը պատրաստողի կազմակերպաիրավական ձեւի, գտնվելու վայրի (իրավաբանական անձի հասցեի) փոփոխություն.

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի (ծածկագրերի) փոփոխություն.

արտադրանքի պատրաստման գործունեությունն իրականացնելու վայրերի հասցեների քանակության կրճատում:

Հայտատուի հեռախոսահամարի եւ (կամ) էլեկտրոնային փոստի, ինչպես նաեւ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի (ծածակագրերի) փոփոխության դեպքում համապատասխանության հայտարարագրի եւ (կամ) դրա հավելվածների փոխարինում չի պահանջվում, եւ այն իրականացվում է հայտատուի հայեցողությամբ:

16. Սույն կարգի 5-րդ կետի «ա» ենթակետում նշված հայտը եւ գրանցված համապատասխանության հայտարարագրի ու սույն կարգի 5-րդ կետի «բ»-«դ» ենթակետերում նշված՝ դրան կցված փաստաթղթերի ու տեղեկությունների պատճենը, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, պահվում են լիազորված մարմնում (սերտիֆիկացման մարմնում) թղթային եւ (կամ) էլեկտրոնային կրիչներով՝ համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետի ավարտից հետո 5 տարուց ոչ պակաս, իսկ եթե համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետն անսահմանափակ է՝ դրա գրանցման ամսաթվից 10 տարուց ոչ պակաս:

Հայտատուի մոտ համապատասխանության հայտարարագրի եւ տեխնիկական կանոնակարգով (տեխնիկական կանոնակարգերով) նախատեսված՝ դրան կցված փաստաթղթերի՝ թղթային եւ (կամ) էլեկտրոնային կրիչներով պահման նկատմամբ պահանջները սահմանվում են տեխնիկական կանոնակարգով (տեխնիկական կանոնակարգերով):

Այն դեպքում, երբ տեխնիկական կանոնակարգով (տեխնիկական կանոնակարգերով) սահմանված չէ հայտատուի մոտ համապատասխանության հայտարարագրի եւ դրան կցված փաստաթղթերի պահման ժամկետը, պահման ժամկետը կազմում է դրա գրանցման ամսաթվից սկսած 10 տարի:

Այն դեպքում, երբ արտադրանքի վրա տարածվում է մի քանի տեխնիկական կանոնակարգերի գործողություն, որոնցով սահմանվում են հայտատուի մոտ համապատասխանության հայտարարագիրը եւ դրան կցված փաստաթղթերը պահելու տարբեր ժամկետներ, կիրառվում է պահպանման սահմանված ժամկետներից առավելագույնը:

17. Գրանցված համապատասխանության հայտարարագրի պատճենը, սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերը եւ տեղեկությունները ներկայացվում են անդամ պետությունների այն մարմիններին, որոնք պատասխանատու են տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար (այսուհետ՝ պետական հսկողության (վերահսկողության) մարմիններ)՝ ըստ իրենց պահանջի:

18. Միասնական ռեեստրի ազգային մասում գրանցված համապատասխանության հայտարարագրի գործողության կասեցման հիմք է համապատասխան անդամ պետության պետական հսկողության (վերահսկողության) մարմնի կողմից հայտատուին համապատասխանության հայտարարագրի գործողությունը կասեցնելու մասին կարգադրագրի տրամադրումը:

Նշված կարգադրագրի տրամադրումը, ինչպես նաեւ համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցումը (վերսկսումը) իրականացվում են անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում եւ կարգով:

19. Համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցման համար հիմք են՝

հայտատուի կողմից համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցման մասին որոշման ընդունումը.

պետական հսկողության (վերահսկողության) մարմնի կողմից հայտատուին համապատասխան անդամ պետության միասնական ռեեստրի ազգային մասում գրանցված համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցման մասին կարգադրագրի տրամադրումը (նշված մարմնի կողմից որոշման ընդունումը).

պետական հսկողության (վերահսկողության) մարմնի կողմից համապատասխան անդամ պետության ազգային մասում գրանցված հայտարարագիրն անվավեր ճանաչելու մասին որոշման ընդունումը:

Նշված որոշումների ընդունումը (նշված կարգադրագրի տրամադրումը), ինչպես նաեւ համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցումն իրականացվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

20. Համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցման մասին հայտատուի կողմից որոշում ընդունվելու դեպքում հայտատուն լիազորված մարմին (սերտիֆիկացման մարմին) է ներկայացնում համապատասխանության հայտարարագրի գործողությունը հայտատուի որոշմամբ դադարեցնելու մասին ծանուցում:

Նշված ծանուցումը պետք է հաստատված լինի կնիքով (եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ) ու հայտատուի ստորագրությամբ եւ պետք է պարունակի համապատասխանության հայտարարագրի գրանցման համարի, ամսաթվի եւ համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցման պատճառի մասին տեղեկություններ:

Ծանուցումն «Ինտերնետ» տեղեկատվական հեռահաղորդակցական ցանցի օգտագործմամբ էլեկտրոնային տեսքով ուղարկվելու դեպքում ստորագրվում է էլեկտրոնային թվային ստորագրության կիրառմամբ:

21. Լիազորված մարմինը (սերտիֆիկացման մարմինը) համապատասխանության հայտարարագրի գործողության՝ հայտատուի որոշմամբ դադարեցման մասին ստացված ծանուցման հիման վրա նշված ծանուցումը ներկայացնելու օրվանից 3 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում իրականացնում է համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցման մասին տեղեկությունների մուտքագրումը միասնական ռեեստր:

22. Պետական հսկողության (վերահսկողության) մարմնի կողմից հայտատուին համապատասխանության հայտարարագրի գործողության կասեցման, դադարեցման, այն համապատասխանության հայտարարագրի գործողության դադարեցման (վերսկսման) վերաբերյալ որոշման, որի գործողությունը կասեցվել է ըստ այդ մարմնի կարգադրագրի, կամ համապատասխանության հայտարարագիրն անվավեր ճանաչվելու վերաբերյալ որոշման մասին կարգադրագիր տրամադրելու վերաբերյալ տեղեկատվությունն ուղարկվում է համապատասխան անդամ պետության միասնական ռեեստրի ազգային մասի ձեւավորման եւ վարման համար պատասխանատու մարմին, եթե այդ պետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

23. Անդամ պետության՝ միասնական ռեեստրի ազգային մասի ձեւավորման եւ վարման համար պատասխանատու մարմինը սույն կարգի 22-րդ կետում նշված տեղեկատվությունը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է կարգադրագրի (որոշման) ամսաթվի եւ գրանցման համարի մասին տեղեկությունների մուտքագրում միասնական ռեեստր:

24. Համապատասխանության հայտարարագրի գործողությունը համարվում է կասեցված, վերսկսված կամ դադարեցված՝ համապատասխան տեղեկությունները միասնական ռեեստր մուտքագրելու ամսաթվից: